ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ
ՊԱՐՈՆ Է. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻՆ

Հարգարժան պարոն մարզպետ

Տեղեկացվում է Ձեզ, որ Արմավիրի մարզի «Ֆերիկի Ռզալիե Ռաշիդի Օզմանյանի անվան հիմնական դպրոց»ՊՈԱԿ-ի տնօրենի թափուր պաշտոնի համար հայտարարված է մրցույթը հետաձգվել է մասնակցության հայտերի բացակայության պատճառով, նույն կարգի 6-րդ կետով փաստաթղթերի ժամկետը երկարացվել է մեկ անգամ, 15աշխատանքային օրով:

Մրցույթը կկայանա 2022թ. Հոկտեմբերի 28-ին՝ ժամը 15^{00}-ին:

Կից ներկայացվում են քաղվածք կառավարման խորհրդի համապատասխան նիստի №15 արձանագրությունից և հայտարարության տեքստը:

Առդիր՝ 1 թերթ և 1 էլեկտրոնային նյութ:

ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Ա.Ղորղանյան

26.09.2022թ.

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
Մուտք թիվ 15673-2022
26.09.2022

ՀՀ Արմավիրի մարզի «Ֆերիկի Ռզալիե Ռաշիդի Օզմանյանի անվան հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի կառավարման խորհրդը հայտարարում է բաց մրցույթ՝ հաստատության տնօրենի թափուր պաշտոնի համար:

Հաստատության տնօրենի պաշտոնի համար անցկացվող մրցույթին մասնակցելու պարտադիր պայմաններն են՝

1. ՀՀ քաղաքացիությունը.
2. «Հանրակրթության մասին» օրենքի 12-րդ հոդվածի 17-րդ մասով սահմանված հիմքերի բացակայությունը:

Մրցույթին մասնակցելու համար պահանջվող փաստաթղթերն են՝

1. Դիմում՝ հաստատության խորհրդի նախագահի անունով.
2. Հայաստանի Հանրապետության քաղաքացու անձնագրի կամ նույնականացման քարտի պատճենը (բնօրինակի հետ),
3. Հաստատության ղեկավարման իրավունքի /հավաստագրի/ պատճենը(բնօրինակի հետ),
4. Տվյալ հաստատության զարգացման ծրագիրը, որը /հավակնորդը կարող է ներկայացնել մինչև գործերի ընդունման ժամկետի ավարտը/ /այդ թվում՝էլեկտրոնային տարբերակով/, որը խորհրդի որոշմամբ լիազորված խորհրդի անդամը հավակնորդի կողմից տրամադրելուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնում է հրապարակման տվյալ դպրոցի պաշտոնական կայքում,ինչպես նաև տրամադրում է նաև խորհրդի մյուս անդամներին:
5. Ինքնակենսագրություն:

Փաստաթղթերի պատճենները պետք է ներկայացնել բնօրինակի հետ:

Փաստաթղթերի ընդունումը կանցկացվի՝ ըստ կարգի:

Փաստաթղթերն ընդունվում են 2022թ սեպտեմբերի 26-ից մինչև հոկտեմբերի 14-ը ներառյալ, ամեն օր ժամը 9 : 00-ից մինչև 15 : 00-ը, բացի շաբաթ կիրակի, օրենքով սահմանված ոչ աշխատանքային, տոնական և հիշատակի օրերից, «Ֆերիկի Ռզալիե Ռաշիդի Օզմանյանի անվան հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ում:

Մրցույթը տեղի կունենա 2022 թվականի հոկտեմբերի 28 -ին՝ ժամը 15:00-ին, «Ֆերիկի Ռզալիե Ռաշիդի Օզմանյանի անվան հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ում, հասցեն՝ գ.Ֆերիկ, Բարեկամության 2:

Տեղեկությունների համար դիմել

Հեռախոս՝ 094-54-57-27, 093-637-656

Էլ. փոստ՝ ferikidproc@mail.ru:

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 15

Նիստը գումարվել է 2022 թվականի սեպտեմբերի 23-ին
Նիստին մասնակցում էին 14 /տասնչորս/ անդամներից 8-ը /ութը/:

ՕՐԱԿԱՐԳ

1. ՀՀ Արմավիրի մարզի «Ֆերիկի Ռզալիե Ռաշիդի Օզմանյանի անվան հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի գործադիր տնօրենի թափուր տեղի համար հայտարարված մրցույթի ժամկետը երկարացնելու վերաբերյալ:

/զեկուցող՝Ա.Ղորղանյան/

ԼՍԵՑԻՆ՝

Խորհրդի նախագահ՝ Արշակ Ղորղանյանը ներկայացրեց, որ հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2010 թվականի մարտի 4-ի N 319-Ն որոշմամբ հատատված կարգի 6-րդ կետի պահանջները՝ մասնակցության հայտերի բացակայության դեպքում փաստաթղթերի ընդունման ժամկետը երկարացվում է մեկ անգամ՝ 15 աշխատանքային օրով:
Դպրոցի միացյալ կառավարման խորհուրդը՝

ՈՐՈՇՈՒՄ Է

1. ՀՀ Արմավիրի մարզի «Ֆերիկի Ռզալիե Ռաշիդի Օզմանյանի անվան հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրենի պաշտոնի թափուր տեղի համար հայտարարել նոր մրցույթ:
2. Փաստաթղթերի ընդունման ժամկետ սահմանել 2022 թվականի սեպտեմբերի 26-ից մինչև հոկտեմբերի 14-ը ներառյալ:
3. Մրցույթը նշանակել 2022 թվականի հոկտեմբերի 28-ին ժամը 15:00-ին:

Կառավարման խորհրդի նախագահ՝ Ա.Ղորղանյան